Հարգելի դիմորդ

Մինչ դիմում-հայտը լրացնելը ուշադիր ծանոթացիր ՀՀ պետական բուհերի հեռակա ուսուցման ընդունելության կանոններին

ՀԻՇԻ՛Ր

- ✓ Հեռակա ուսուցումը բուհում կազմակերպվում է վճարովի հիմունքներով:
- ✓ Հեռակա ուսուցման տևողությունը 5 տարի է՝ բակալավրի ծրագրով:
- ✓ Հեռակա ուսուցմամբ բուհ ընդունված ուսանողները չեն օգտվում պարտադիր զինվորական ծառայության տարկետման իրավունքից:
- ✓ Դիմորդները կարող են պահպանել 2021թ. «Հայոց լեզու, գրականություն», «Հայոց պատմություն», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իսպաներեն, իտալերեն, պարսկերեն լեզուներ), «Ռուսաց լեզու» և «Մաթեմատիկա» առարկաների միջնակարգ լրիվ ընդհանուր կրթական ծրագիր իրականացնող հաստատության միասնական քննությունների և 2021թ. կենտրոնացված համակարգով հանձնած քննությունների դրական գնահատականները՝ իրենց ցանկությամբ:
- ✓ Դիմորդին իրավունք է վերապահվում, պահպանելով նաև 2021թ. միասնական կարգով հանձնած քննական առարկայի (առարկաների) գնահատականը (գնահատականները) տվյալ առարկայից (առարկաներից) հանձնել քննություն: Այդ դեպքում հաշվի է առնվում դիմորդի ստացած առավել բարձր գնահատականը:
- ✓ Պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված դիմորդները քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում բուհ են ընդունվում մրցույթից դուրս, ըստ մասնագիտությունների նախարարության կողմից հաստատված տեղերի:
- ✓ Հեռակա ուսուցման մրցույթով անցած դիմորդների հրամանագրումը կատարվում է միայն ուսման վարձի վճարումից հետո:
- ✓ 1-ին և 2-րդ խմբերի, մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամ և առանց ծնողական խնամքի մնացած մինչև 23 տարեկան երեխաները բուհ ընդունվելու դեպքում օգտվում են ուսման վարձի ամբողջական փոխհատուցման իրավունքից:
- ✓ ՀՀ պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների երեխաները, ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիները ընդունվում են մրցույթից դուրս՝ քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում՝ պետական բյուջեի միջոցների հաշվին:
- ✓ Ընդունելության դիմում-հայտը և փաստաթղթերն ընդունման ժամկետի ավարտից հետո փոփոխման ենթակա չեն:

Ծանոթ եմ 2021թ. ՀՀ պետական բուհերի հեռակա ուսուցման ընդունելության կանոններին:

Դիմորդ՝ _____ _____

ստորագրություն ազգանուն, անուն

« ____» _____2021թ.